ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 3, 1959 Общественные науки

Մ. Կ. Ջուլալյան

ԹՈՒՐՔ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՐԻՏՈՐԻԱՅԻ ՎՐԱ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ (1500—1555 ԹԹ.)

XVI դարը հայ ժողովրդի դարավոր պատմության մեջ սկսվեց արյունալի դեպքերով։ XVI դարի արշալույսին Հայաստանի տերիտորիայի վրա մղվում էին անվերջ պատերազմական գործողություններ արևելյան երկու պետությունների՝ օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Պարսկաստանի միջև առևտրի ուղիների տիրապետման, և հետևաբար, Անդրկովկասում և Մերձավոր Արևելքում իրենց տնտեսական և քաղաքական հեգեմոնիան հաստատելու համար։ Հայաստանն իր ուսերի վրա էր կրում պատերազմական գործողությունների ամբողջ ծանրությունը։ Այդ պատերազմական գործողությունները ավերում ու ամայացնում էին երկիրը, հայ ժողովրդին պատճառում անլուր դժբախտություններ։

Այս հոդվածում մենք կանգ չենք առնելու օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Պարսկաստանի պատերազմների պատմությանը այնքան, որքան այդ մասին գոյություն ունի հատուկ գրականություն[1]։

Հիմնվելով սկզբնաղբյուրների տվյալներին, մենք այստեղ վեր ենք հանելու այդ պատերազմական գործողությունների ծանր հետևանքները Անդրկովկասի ժողովուրդների և հատկապես հայերի համար։

Այն բանից հետո, երբ Շահ Իսմայիլ 1-ինը (1502—1524) հիմնեց Սեֆյան պետությունն Իրանում, Պարսկաստանի պետական շահերը բախվեցին օսմանյան Թուրքիայի էքսպանսիոնիստական քաղաքականության հետ։ Այդ քաղաքական շահերը, որոնք թաքնված էին սյուննիզմի պայքարը շիիզմի դեմ շղարշի տակ, օսմանցիներին և պարսիկներին դարձնում էին անհաշտելի թշնամիներ։

Այս հիման վրա 1503—1504 ԹԹ. Հայաստանի տերիտորիայի վրա սկսվեցին պատերազմական գործողություններ վերոհիշյալ երկու պետությունների միջև։

Այդ պատերազմական գործողությունների ավերիչ ու ամայիչ բնույթի մասին խոսում են այդ տարիների մի շարք հայկական ձեռագրերի հիշատակարանները։ Բերենք մի քանի օրինակներ։ Կամախի գավառից գրիչ Վրթանեսը գրում է 1501 թ., որ նա այլ հայերի հետ միասին փախել է իր հայրենի երկրից

---

[1] *Այդ աշխատություններից ամենագլխավորներն են՝* J. Hammer, Histoire de l'empire ottoman, tomes IV—VI, Paris, 1834—1835; J. H. Uzunçarşılı, Osmanlı tarihi, c. II, Ankara, 1949; Fischer Sydney Nettleton, The foreign relations of Turkey in 1483—1512, Urbana, 1948; И. П. Петрушевский, Азербайджан в XVI—XVII вв. (Сборник статей по истории Азербайджана), вып. I, Баку, 1949.

«Վասն աւերման չարին [ս]աւֆոյ, որ անբնակ արար զաշխարհն մեր յազգէ մարդոյ. զգաւառն ասացեալ եկեղեաց և այժմ Եղնկայ կոչելոյ»[2]։

Գրիչ Հակոբը Մուշից 1504 թ. արտագրում է մի աստվածաշունչ «Ի դառն և ի չար ժամանակի», երբ «Վասն բազում մեղայ մերոց մատնել է զմեզ Աստուած ի ձեռն օտար և այլազգեմ արիւնարբու ազգին, որ Կարմիր Գլուխ Սոֆի ասին, որ յինչ տեղ որ գնացին, զամենեսեան անողորմ ի սուր քարշեցին, դերեցուցին և թալանեցին և զորս փախստական արարին։ Եւ յայսմ ամի զերկիրն Աղբակայ զաղայ արարին. զայրս եւ կանայս սրով կոտորեցին։ Եւ զանմեղ տղայս, զաղջկամարդսն գերեցուցին։ Եւ ի սոյն ատուրքս զՎան եւ զՈստան աւերեցին։ Եւ կրկին պատուհաս շարժեալ է ի վերայ աշխարհիս՝ մահտարաժամն»[3]։

Հովհաննես գրիչը Վանից 1504 թ. գրում է. «Արդ գրեցաւ ի նեղ և ի դառն ժամանակիս. որ զօրացան ազգն արիւնարբու, որ Կարմիր Գլուխ սոֆիք կոչեն. եւ ասպատակաւ աւերեցին զբազում տեղիս»[4]։

Գրիչ Մարտիրոսը Գլակից 1509 թ. գրում է, որ ավետարանն արտագրված է «...ի կայսրութեան՝ բռնակալութեան ազգին նետողաց Շահ Իսմայելին, որ բազում ոճիրս գործեաց և շատ աւեր արար աշխարհիս»[5]։

Պարսամ քահանան Աղթամարից 1509 թ. գրում է, որ «...կայ մեծ պատուհաս ի վերայ աշխարհիս, վասն ծովացեալ մեղաց մերոց։ Քանզի յայս ժամանակս եղաւ փաթշախ մի ի Թավրեզ՝ Շախ Սմայել անուն, որ է Կարապետ Նեռին. եւ արար բազում աւեր աշխարհիս, սպանումն և թալան ընդ ամենայն տեղիս. եւ ո՞վ կարէ ընդ գրով արկանել զչարութիւն և զաւեր նորա, զոր առնէ ի վերայ աշխարհիս»[6]։

Այսպես են սկզբնաղբյուրները բացահայտում 1504—1509 թթ. Շահ Իսմայիլի արշավանքների հետևանքները Հայաստանում։

Սակայն, ինչպես հայտնի է ուսումնասիրողներին, Շահ Իսմայիլ 1-ինը անձամբ բարյացակամ էր վերաբերվում քրիստոնյաներին և հատկապես հայ լուսավորչականներին։ Նա բանակցություններ էր վարում եվրոպական քրիստոնյա պետությունների հետ, Թուրքիայի դեմ մի ընդհանուր բլոկ կազմելու նպատակով։ Այս հանգամանքն, անշուշտ, ազդում էր նրա կրոնական քաղաքականության վրա։ Հետապնդելով մուսուլման-սյուննիտներին, հրեաներին, նա միաժամանակ հատուկ հովանավորություն էր ցուցաբերում հայոց կաթողիկոսի և առհասարակ հոգևորականության նկատմամբ, որպես երախտապարտության նշան այն բանի համար, որ Աղթամարում հայ հոգևորականությունը փրկել էր նրան մահապատժից։

«Քրիստոնյաներին,— կարդում ենք մենք իտալական մի ճանապարհորդի մոտ,—նա (այսինքն շահը) ցույց է տալիս բարյացակամ [վերաբերմունք], որովհետև նա թողնում է իր ամբողջության մեջ բոլոր նրանց եկեղեցիներն ու մա-

---

2 A catalogue of the armenian manuscripts in the British Museum by F. C. Conybeare. London, 1913. p. 105.

3 ս. Ներսեսով. Ակինյան, Բաղեշի դպրոցը 1500—1701, 1952, էջ 31։

4 Պետ. Մատենադարանի ձեռագիր, № 4515, էջ 253։

5 Համազասպ Ոսկյան, Տարոն—Տուրուբերանի վանքերը, Վիեննա, 1953, էջ 187—188։

6 Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, կազմեց Երվանդ Լալայանը։ Թիֆլիս, 1915, էջ 637։

տուները առանց բռնությամբ դիպչելու։ Եվ տանում է իր հետ հայոց պատրիարքին և մեր հավատին հետևող բազմաթիվ վանականներին ու հոգևորականներին»[7]։

Բալական ճանապարհորդի այս տվյալները հաստատվում են մի հայերեն ձեռագրի հիշատակարանի հաղորդումներով։ Թադևոս գրիչը 1506 թ. գրում է Խիզանից, որ «...Շահ Սմայիլ, ելաւ ի մահմետական յազգէն, և եղև քակտումն թուրքաց ազգին (այսինքն սյուննիտներին — Մ. Ջ.) և պղտորումն եղև յարևելից մինչև ի շամբատունն։ Եւ զԹաւրէզ քաղաքն քակեաց, եւ զվաղուց փտեալ ոսկերս պարոնացն՝ եհան և այրեաց հրով, և զմսքիթն ամենայն արար վտիթկայս. եռ զմրնարէքն քակեաց մինչև յատակս... Եւ եկաւ ի Խոյ և շինեաց նոր թաղթ. և կոչեաց առ ինքն զկաթուղիկոսն և ասաց. լսել եմ թէ յԵրուսաղեմ լոյս ելանէ. ասէ այո . ասէ շահն աղօթս արարէք՝ որ ես երթամ տեսնամ. և վերացոյց քահանայիցն զգլխադրամն զորոյ զվճարն Աստուած գիտէ»[8]։

Ինչպե՞ս բացատրել աղբյուրների այս հակասական տվյալները։ Ամենայն հավանականությամբ, երկրի ավերման պատճառ եղել է քրդական որոշ ցեղերի դիմադրությունը Շահ Իսմայիլի զորքերին և նրանց դեմ վերջինի կողմից կատարած պատերազմական գործողությունների անխուսափելի հետևանքները։

Եթե ուշադրությամբ հետևենք XVI դարի քուրդ հեղինակ Շերեֆ էդդինի վկայություններին, ապա պարզ կդառնա, որ Շահ Իսմայիլի արշավանքի ժամանակ, վերջինն ուներ բազմաթիվ հակառակորդներ քրդական բեկերի մեջ[9]։

Եվ պատահական չէ, որ հայկական աղբյուրները այդ տարիներին հիշատակում են քուրդ բեկերի թալանիչ արշավանքների մասին հայկական նահանգներում։

Երկրի ավերվածությունը կատարվել է քուրդ բեկերի, թե պարսիկ-զզըլբաշների ասպատակություններով, վերջին հաշվով էական չէ։ Աղբյուրների վկայություններով պարզվում է, որ Հայաստանում ստեղծվել է արտակարգ ծանր դրություն։ Եվ ահա, XVI դարի բանաստեղծ, Աղթամարի հայոց կաթողիկոս Գրիգորիս Աղթամարցին կարճ, սակայն վերին աստիճանի արտահայտիչ ձևով ներկայացնում է մեզ Հայաստանի պատկերը 1524 թ.։

«Հագարացիք օրինօք թիւր
Ջաղգս խանձեն, որպէս ղհուր»[10]։

Հայաստանի համար ծանր հետևանքներ ունեցավ նաև 1514 թ. սուլթան Սելիմ Յավուզի (1512—1520) արշավանքը Իրան, Երզնկա — Դերջան — Էրզրում — Ջալդրան ճանապարհով և հետադարձ ճանապարհին Արևմտյան Հայաստանի քաղաքների (Կամախ, Բայբուրդ, Էրզրում և այլն) գրավումը։

---

[7] Raphael du Mans, Estat de la Perse en 1660 édité et annoté par Ch. Schéfer, Paris, 1895, appendice, p. 274—275 („Aux chrétiens il se montre bénivolent, car il laisse en son entier toutes leurs églises et chapelles sans y toucher par violence. Et maine avecques luy le patriarche arménien et plusieurs prestres et religieux tenans notre foy".

[8] Պետական Մատենադարանի ձեռագիր, № 1515, էջ 254—255։

[9] Տե՛ս, „Chéréf nameh ou fastes de la nation kourde, par Chéréf Ouddine", traduit du persan et commenté par F. B. Charmoy, tome I, 2ème partie, SPB, 1870, p. 152—153.

[10] Կ. Կոստանյան, Գրիգորիս Աղթամարցին և իւր տաղերը», Թիֆլիս, 1898, էջ 13։

Սուլթանական զորքերի արշավանքը հպատակված ժողովուրդների համար, նախ և առաջ, նշանակում էր տեղական ժողովրդի կողոպուտը, որտեղից որ անցնում էր բանակը, նորանոր ու ծանր հարկերի բռնի գանձումը, հսկայական բանակի արտակարգ պահանջների բավարարումը պարենով և բնակչությանը կոռային աշխատանքի բռնի լծումը։

Նահանջի ժամանակ պարսկական բանակը ոչնչացնում էր ամեն ինչ։ Այսպես, Մյունեջիմ բաշիի թուրքական ժամանակագրության մեջ մենք կարդում ենք, որ «ամեն ինչ ոչնչացված էր», և որ «ղզլբաշները ստիպել էին բոլոր հպատակներին թաքնվել լեռներում և երկրում ոչինչ չէր մնացել, անգամ խոտը»[11]։

1515 թ. թուրքերի կողմից Կամախի գրավման մասին Մարտիրոս գրիչն հայտնում է, որ Սելիմն «...էառ զբարդն Կամախայ և զրազումն կոտորեաց ի քրիստոնեից և անհաւատից»[12]։

1515 թ. Շահ Իսմայիլ առաջինի և Սելիմ Յավուզի միջև կնքվեց զինադադար, ըստ որում Արևմտյան Հայաստանն էրզրումի հետ միասին անցավ օսմանյան տիրապետության ներքո։ Ամբողջ մնացյալ Հայաստանը, ինչպես և Ադրբեջանը մնացին պարսիկների ձեռքին։ Սակայն խաղաղությունը պետք է տևեր կարճ և 1533—1534 թթ. պատերազմական գործողությունները Հայաստանի տերիտորյայում պիտի վերսկսվեին։

Պարսկա-թուրքական այս նոր պատերազմների անմիջական առիթը հանդիսացավ հետևյալ հանգամանքը՝ Բիթլիսի քուրդ էմիր Շերեֆ խանը, դժգոհ օսմանյան կառավարությունից, անցավ պարսկական Շահ Թահմասպ 1-ինի կողմը։ Միաժամանակ Ադրբեջանի կառավարիչ Ուլաման, դավաճանելով շահին, անցավ թուրքերի կողմը։ Ի հատուցումն դրան, սուլթանական կառավարությունը Ուլամային նշանակեց Բիթլիսի կառավարիչ Շերեֆ խանի փոխարեն։ Ուլաման թուրքական օժանդակ ուժերով պաշարեց Բիթլիսը, սակայն Շերեֆ խանը նրան ցուցաբերեց ուժեղ ռազմական դիմադրություն, միաժամանակ դիմելով շահի օգնությանը։ Շահն օգնեց Շերեֆին, և Ուլաման նահանջեց[13]։

Այս դեպքերը կոնկրետ ու մանրամասն ձևով նկարագրված են Հովհաննես Արճիշեցու տարեգրության և այդ ժամանակաշրջանի հայկական ձեռագրերի մի շարք հիշատակարաններում։ Որպես ականատեսի, Հովհաննես Արճիշեցու հաղորդած տեղեկությունները միանգամայն հավաստի են. «Ես մեղատոր Յոհաննէս,— գրում է հեղինակը բնագրում,— զայս դառն օրս աչօքս եմ տեսել»։

Ուլամայի զորքերի ավերիչ ռազմական գործողությունների անմիջական հետևանքը, ինչպես վկայում է Հովհաննես Արճիշեցին, եղավ մահտարաժամը։ «Եւ դարձեալ միւս ամին (= 1533 թ.) գրում է հեղինակը, — մահտարաժամ եղեւ ի վերայ աշխարհի և բազում մարդիկ խոցեցան ի հրեշտակացն աստուծոյ և մեռան. քանի հայր և մայր անորդի եղան և անդուստր և քանի քոյր առանց եղբայր և եղբայր առանց քոյր մնացին. քանի սիրուն հարսն ու փեսայ

---

[11] Münecim başı tarihi, c. III, Istambul, 1861, s. 451. دیرا قزلبش جمله رعایاسنی طاغلره جکوب مملکتده زاد و علف قالممشدی.

[12] Պետ. Մատենադարանի ձեռագիր, № 1515, էջ 258։

[13] Տե՛ս, A chronicle of the early Safawis being the Ahsanut-tawarikh of Hasan Rumlu, vol. II, translated by C. W. Seddon, Baroda, 1934, p. 109—110; Y. Peçevi, Tarih-i Peçevi, c. I, Istanbul, 1868, s. 175.

բաժանեցան. և քանի քոյր և եղբայր ի մեկ գիշերի մեռան. եւ ո՞վ կարէ պատմել զաղետ և զկսկիծն ծնողացն և զընտանեացն. սիրելեացն և զբարեկամացն. բայց աստուծոյ միայն է գիտելի, որ ստեղծ զնոսա. և այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց»[14]։

1533 թ. Ուլամայի զորքերը վերսկսում են պատերազմական գործողությունները։ Նրանք անհաջող կերպով պաշարում են Վանի բերդը։ Նրանց չի հաջողվում նաև իրենց ենթարկել Բիթլիսի գավառը քրդական ցեղերի ուժեղ դիմադրության հետևանքով։

Սկսվեց օսմանյան բանակի ուղղակի ռազմական միջամտությունը։ Մեկը մյուսի հետևից սերասկեր Իբրահիմ փաշայի զորքերը գրավում են Հայաստանի քաղաքները՝ Արծկեն (Ադիլջևազը), Արճեշը, Խլաթը (Ախլաթը) և Վանը։ Գերազանցող թուրքական բանակի առաջ պարսիկներն ստիպված էին նահանջել։

Սուլթանական զորքերի այս արշավանքը նույնպես ունեցավ աղետալի հետևանքներ։

Այն բանից հետո, երբ Թավրիզը գրավվեց թուրքերի կողմից, սուլթանական բանակը շարժվեց դեպի Բաղդադ։ Սուլթանի կողմից Թավրիզի կառավարիչ նշանակվեց Ուլաման։ Օգտագործելով օսմանյան բանակի բացակայությունը, և որպեսզի վրեժ լուծի Ուլամայից, Շահ Թահմասպը հարձակվեց նրա վրա։ Ուլաման փախավ Վան, իսկ պարսիկները՝ նրա հետևից։ Այս ռազմական գործողությունների հետևանքով ամբողջ Վասպուրականն ավերվեց և հիմնահատակ արվեց։ Հատկապես ծանր դրության մեջ էին Վանի բնակիչները։ Պրոֆեսոր Լեոն միանգամայն արդարացի է, երբ այդ դեպքերն անվանում է «Վանի աղետը»[15]։

Վասպուրականի դեպքերը դարձյալ սրտաճմլիկ տողերով նկարագրել է Հովհաննես Արճիշեցին. «Եւ խոնդքարն,— գրում է նա,— ի յետ դարձաւ և գնաց ի Բաղդադ. և զՈւլամէն եթող ի Թաւրէզ. Շահն լուաւ զմնալն Ուլամին շուտ ի վերայ դարձաւ. և նա լուաւ զգալ շահին փախաւ ի Թաւրիզոյ և ամրացաւ ի Վանայ բերդն. եւ Մահմատ սուլթան ի յԱրծկէ փախուստ գնաց ի Թաւրիզոյ. և լուեալ շահին ի Վան լինելն զաշխարհաւեր Ուլամին, շուտ ի վերայ հասաւ. և պաշարեաց զքաղաքն և զբերդն, և ի յուժ ձգել կարմիր գլխին, թողին զքաղաքն և ամրացան ի բերդն. և ի յառնալ քաղաքին երեք հարիւր մարդ ի սուր քարշեցին, և ի յահէ կարմիր գլխին, աբեղայ մի և շատ մարդ ներքև յոտից մնացին և մեռան ի կտրած քարին, և ով կարէ ճառել զպատուհասն եղև. և սկսաւ քակել զքաղաքն և զերկիրն, զի զշինսն քակէին և մինչև ի լոյս հազար տեղ կրակ վառէին և զճանապարհներն պահէին, որ մարդ ի բերդեն չիջանէր, և հեծեալքն ցուրեալ ի շորս դիմաց աւերեցին և անմարդարնակ արարին. զՎանայ երկիրն, զՈստանայ և զԱմկոն, և զինչ մարդ որ ի ձեռքն անկանէր, այնչափ տանջէին, որ զիւր տեղն և զգեղն ի խոստ գայր. և տարեալ ի յիւր շէն շարշարէին, մինչ որ ի խոստ գայր ապարանքն և զայլոցն, և սաստկացաւ պատուհասն, որ և զհրաշալի վանօրայքն և զեկեղեցիքն քակեցին...»[16]։

«Եւ յամէն օր,— շարունակում է մեր հեղինակը,— տասն մեծ թոփ ձգեին

[14] Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հատ. Բ, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակություն, Երևան, 1956, էջ 228։

[15] Լեո, Հայոց պատմություն, հատ. Դ, Երևան, 1946, էջ 181։

[16] Մ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հատ. Բ, էջ 228։

ի բերդն և զարպաղանդին և թագին թիւ չկայր, և ծովու բոլորս ի մեծ թոփի ձայնեն կու սասանէր, ապա բերդի մարդ ո՞նց կու դիմանայր, աւաղ, զիմ հոգոյս, թէ քանի մարդ մեռաւ սրով և թրով, թոփով և թուանկով, սովով և ծարաւով, ահիւ և զողալով, ի սուրբ Սարգսի պահոցեն մինչև ի Համբարձում (այսինքն՝ հոմնվարի երկրորդ կեսից մինչև Համբարձման տոնը—մայիսի 3)»[17]։

Հովհաննես Արծիշեցու այս վկայութիւնները հաստատվում են ժամանակի հայերեն ձեռագրերի մի շարք հիշատակարաններով։

Ղ. Ալիշանի կողմից մեջբերված հիշատակարանը աչքի է ընկնում դեպքերի մանրամասն ճշմարիտ ու վառ նկարագրությամբ։ Ավելորդ չենք համարում այն մեջբերել որոշ կրճատումով։

«Ի ՋԶԳ (1534) թուականիս... եկն տէրն Ստամբուլայ՝ հոնքարն, որ ասի յանտանէ Սուլթան Սիւլեյման, բաղում զօրաք ի վերայ Կարմիր Գլխուն, և ինն օր նստաւ ի վերայ երկրիս մերոյ, զի այնքան անհոմ էր զօրք նորին՝ մինչ թուէր մեզ որպէս զաւազ ծովու և կամ զշիթս անձրևաց. իբրև հայեաք յաստեղս երկնից և ի վրանս նոցա՝ միապէս երևեր. վասն զի իւրեանքն ոչ գիտէին թէ որքան էին, և մէք ոչ կարացաք զիտել. և հիացման արժանի է վասն խառնիճաղանճ զօրացն։ Եւ Կարմիր Գլուխն փախեաւ ի նմանէ, և նա հետամուտ եղեալ մինչ ի Սուլթանիա, և այլ ոչ կամեցաւ գնալ. դարձավ ի Բաղդադ, և զամեն ի լման անդ եկաց վասն միւս անգամ զալոյն ի վերայ Շահ Թահմազին, վասն զի տիրեալ էր բազում քաղաքաց, նախ տանն Հոռոմոց և Շամա, և Մրսրայ և Դիարբեկին, և բռնացեալ էառ ի հիւսիսային կողմանէն մինչ ի բերդն Ամկայ, և ի մերոյս՝ մինչ յԱրծկէ, և Վանա կողմանեն՝ մինչ ի յԱղթամար, և ի հարաւային կողմանէն՝ մինչ ի Բաղդադ։ Իսկ արեանարբու մարդադէմ գազանն անագորոյն և տմարդի Ուլամէն, որ նա եղև պատճառ աւերման արևելյան աշխարհիս մեր, բանզի յառաջն Կարմիր Գլուխ էր՝ և դարձաւ և զհոնքարն նա եբեր ի վեր, ամրացաւ ի բերդն Վանայ։ Իսկ յորժամ լուաւ Շահն Թահմազ զմտանելն նորա ի դղեակն՝ վազվազակի դարձաւ ի վերայ զի Թափեսցէ զթոյնս դառնութեան իւրոյ՝ զի ի ձմեռնային յեղանակն եկն. և երկիրն ամեն թողեալ զտուն և զտեղ և զոռճիկս իւրեանց ի տուն, և փութանակի առեալ զկանայս և զորդայս իւրեանց՝ և մտան ի բերդն. զի այնքան սասակացաւ ահն՝ մինչզի ոչ կարացին հաց բառնալ ընդ ինքեանս. զի ծովացեալ մեղրն մեր ոչ եթող. իսկ ոռճիկք նոցա ամեն յիւր տեղն մնաց կապած...։ Իսկ Կարմիր Գլուխն խարեալ զբերդն և նստած ի սուրբ Սարգսի պահոցեն մինչ ի Համբարձումն և ի մեծ նեղութիւն արկեալ։ Իսկ ժողովուրդն զայն սակաւ կերակուրն զոր տարեալ էին՝ հատաւ. իսկ շատք ի քրիստոնեից կերան զմիս ձիու և զրզտու և զիշու, և այս ոչ բաւեաց. ամենեքեան սովալլուկ լեալ մեռան, որն ի սովոյ և որն ի թրանկէ և որն ի թոփեն, հաւատացեալ և անհաւատ, անձին ԺԶԹ (16000) ընդ այր և ընդ կին, ընդ ծեր և ընդ տղայ, ի բերդն և ի բերդեն ի դուրս»[18]։

Զոհերի թիվը որպես Վանի դեպքերի հետևանք, ինչպես տեսնում ենք, հայկական աղբյուրներում հիշատակվում է 15—16 հազար մարդ։

Հակոբոս Տաշյանի հայերեն ձեռագրերի ցուցակում ժամանակակից մի

[17] Նույն տեղում։

[18] Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 591։ Որպես լրիվ համընկնություն հետաքրքիր է նշել, որ պարսիկ պատմագիր Հասան Ռումլուի մոտ նույնպես նշվում է, որ այդ դեպքերը տեղի ունեցան ձմռան ցուրտ ամիսներին։ Տե՛ս. Ahsanu't-tawarikh, p. 114.

գրիչ 1534 թ. դեպքերը նկարագրելիս, այդ մասին գրում է. «Ի սոյն ամի յորում էր թիւն Ջ և ՋԳ (1534) սուլթան Սուլեմանն եկաւ ի վերայ Կարմիր Գդակին և նա ոչ կարաց դդէմ անել՝ փախեաւ յարեւելս. իսկ նորա հետամուտ եղեալ և էառ զբաղում քաղաքս, ընդ նմին և զՎան քաղաք, զամուրն շռայլին Շամիրամայ եւ գնաց մինչ ի Սոլթանիա, դարձեալ ի յետ գնաց ի Բաղդադ, և ձմեռն անդ եկաց, եւ Կարմիր Գդակն դարձաւ ի վերայ Վանայ և դ (4) ամիս խսարեաց. աւախ և վայ է զիս. Ո՜ րերան, թէ որքան անձիս կորան, հաւատացեալ և անհաւատ զի կարծես էր թէ քան զԺՋՌ (16000) անձինս մեռան, աւելի և ոչ պակաս. փառք աստուծոյ»[19]։

Այդպես էր դրությունը Վանի բերդում, սակայն Վասպուրականի այլ տեղերի դրությունը ոչնչով չէր տարբերվում Վանի վիճակից։ Այդպիսի ծանր դրության մեջ գտնվում էր, ինչպես այդ մասին վկայում է Հովհաննես Արճիշեցին, Ոստանը, Ամկունը, Արճեշը և այլ վայրեր։

«Աւաղ զիմ հոգիս հայրք և եղբայրք.—գրում է Հովհաննես Արճիշեցին,—թէ քանի չարիք գործեցաւ ի յայս հեծեալ շարժութեանցս և ի վրդովմանցս, **բանի բաղաք և գավառ աւերեցան** (ընդգծումը մերն է — Մ. Զ.) և քանի վանօրայք և եկեղեցիք քաղդեցան, քանի մեծատունք աղքատացան, և վաճառականք թալանեցան, քանի քրիստոնյայք գերի վարեցան, և անմեղ տղայքն ի հանօրենքն խառնեցան և չեմ կրնար գրել չարիքն, զոր վերին աշխարհն քաշեց ևս առաւել ծովու բոլորս. և այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց»[20]։

Սուլթան Սուլեյմանի նոր արշավանքը դեպի Արևելք վերջ դրեց Վանի պաշարողական դրությանը։ Այս անգամ սուլթանական բանակը շարժվեց դեպի Թավրիզ Քրդիստանի և Մարաղի միջոցով[21], Շահ Թահմասպը վերջ տվեց Վանի ամրոցի պաշարմանը և շտապեց Իրանի Պաշարվածներից, նրանք, ովքեր մնացել էին կենդանի, դուրս եկան ամրոցից «նուաղեալ և նուաղեալ, խոց սիրտ և լալոտ աչօք», որովհետև «որոց հայրն և մայրն մեռեալ և որոց դուստր և որդին ի սուրն քաշեալ և որոց տունն անցեալ և սիրտ սիրելեացն և բարեկամացն խորովեալ, և մարդ հողեղէն ոչ կարէ ճառել կամ լեզւով պատմել»[22]։

Վանի գրավումից հետո, սուլթանը մի փաշայի նշանակում է քաղաքի կառավարիչ, սակայն փաշան, տեսնելով քաղաք-ամրոցի ավերված վիճակը, Հովհաննես Արճիշեցու ասելով, հետ է վերադառնում։ Ըննելով դառը փորձից ու գտնվելով պարսիկների երկրորդ անգամ Վասպուրական ներխուժման վտանգի առաջ, հայերը թողնում են իրենց տունը և հեռանում փաշայի հետևից։

«Եւ դարձեալ զմնացուած չարիքն,— գրում է Հովհաննես Արճիշեցին,— որ եղև ի յերկուց թագաւորացն, շահն գնաց ի վերին աշխարհն և խոնդքարն յետև, մինչև յաշուն և շուռ եկին. շահն գնայր՝ ու խոնդքարն յետևն, ոչ պատերազմեցան, և ոչ հաշտեցան, այլ խոնդքարն ի հետ դարձաւ. և շահն գնի մինչև ի Խոյ. Հոռոմոց թագաւորն գնաց ի Խլաթ, և Ուլամեն ի Վան ի ներս գնաց. մեծ փաշէն իր խոնդքարն ուղարկեց թէ զՎանայ տիրէ, եկաւ տեսաւ աւերն կարմիր գլխոյն, որ այլ զօրութիւն չէր թողեր թօփն ի բերդն, շուտով

10 Ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց հայր Յ ա կ ո վ պ ո ս Տ ա շ ե ա ն, Վիեննա, 1895, էջ 434։

20 Վ. Հ ա կ ո բ յ ա ն, Մանր ժամանակագրություններ, հատ. Բ, էջ 231։

21 J. H a m m e r, Histoire de l'empire ottoman, tome IV, p. 505–507.

22 Վ. Ա. Հ ա կ ո բ յ ա ն, Մանր ժամանակագրություններ, հատ. Բ, էջ 230։

փախաւ ի Գաւաշն ի ներս գնաց ի խոնդքարն, այն լալի ժողովուրդ Վանայ, որ գայս ամենայն չարիք տեսեալ էին, տեսին որ Հոռմեցիք թողին զբերդն ու փախեան, նոքա այլ փութով ելան զկնի Հեծելին և գնացին ի Մոկս դառն արտասուօք, զի զրկեցան ի յընտանեաց որ ի բերդն մնացին և յապրանաց որ թալան գնաց և դարձեալ լալոտ աչօք ելան, որ յօտար երկիր վտարան»[23]։

Շահի զորքերի դեպի Արևմտյան Հայաստան նոր ներխուժման առաջն առնելու նպատակով սուլթանը դարձյալ ուղարկեց Ուլամային և երեք այլ փաշաների պարսիկների դեմ, սակայն վերջինները ջախջախեցին թուրքական զորքերը։ Հետապնդելով թուրքերին Հայաստանում, պարսիկները կողոպտում են Խլաթը. Մուշը, Ոստանը և շարժվում դեպի Թավրիզ։ Վանը, Արճեշը և Հարավային Հայաստանի այլ քաղաքներ գրավվում են պարսիկների կողմից[24]։

1533—1535 թթ. պատերազմական գործողությունները Թուրքիայի և Սեֆյան Պարսկաստանի միջև երկու կողմերի համար վերջացան առանց արդյունքի։ Թուրքիային չհաջողվեց Պարսկաստանին հասցնել վճռական հարված, բացառությամբ Բարձր Հայքի (Դերջան, Էրզրում, Կարս), ամբողջ Արևմտյան և Հարավային Հայաստանը շարունակում էր մնալ պարսիկների ձեռքին։ Ուստի և որևէ մի առիթ կարող էր վերջ տալ ժամանակավոր զինադադարին։ Եվ այդ առիթը շուտով հանդես եկավ։

1947 թ. Էլկաս Միրզան, Շահ Թահմասպի եղբայրը, ապստամբեց նրա դեմ և փախավ Ստամբուլ, Էլկաս Միրզան դրդեց թուրքերին սկսել նոր պատերազմական գործողություններ պարսիկների դեմ։ Եվ պատերազմն սկսվեց։

1548 թ. գարնանը սուլթան Սուլեյմանը հսկայական բանակով շարժվեց արևելք Կոնիայի, Սեբաստիայի, Ամասիայի, Էրզրումի, Արծկեի վրայով դեպի Թավրիզ։ Ուլաման և Փիրի փաշան սուլթանի կողմից ուղարկվել էին Վանի բերդի պաշարման համար։ Պարսիկները ոչ մի դիմադրություն չցուցաբերեցին և Թավրիզի գրավումից հետո, սուլթանական բանակը շարժվեց դեպի Վան։ 1548 թ. օգոստոսի 15-ին սուլթանական բանակը կանգ է առնում Վանի շրջակայքում։ «Ամբողջ մի շաբաթ,— գրում է թուրք պատմագիր Ի. Փեչևին,— գիշեր և ցերեկ ռմբակոծում էին ամրոցը»։ Իններորդ օրը Վանի բերդը գրավվեց թուրքերի կողմից։ Սակայն շուտով թուրքական բանակը հետ քաշվեց Հայաստանից։ Ինչպես միշտ օգտվելով հարմար առիթից, պարսիկները նորից ներխուժեցին Հայաստան Վանի, Մուշի, Բիթլիսի, Արճեշի և Արծկեի ուղղությամբ, ավերելով ու ամայացնելով ամեն ինչ իրենց ճանապարհին, այդ մասին միաձայն կերպով վկայում են ինչպես հայկական, այնպես էլ թուրքական աղբյուրները։

«Այդ նույն տարին,— գրում է Ի. Փեչևին,— մոլորյալ շահը, իմանալով Վանի գրավման մասին և ի վիճակի չլինելով դիմադրել իսլամական (թուրքական) բանակին, սկսեց կողոպտել Ադիլջևազի (Արծկենի), Մշո դաշտի և Ախլաթի (Խլաթ) բնակիչներին, կոտորեց իր ձեռքն ընկած թույլերին, չքավորներին և սրբերին։ Կողոպտված արշաւի՝ ուխարների, կովերի ու հորթերի հոտիվ դարձած քշեց ու տարավ»[25]։

---

[23] Նույն տեղում, էջ 231։

[24] „Absanu't-tawarıkh", p. 143; „Tarih-i Peçevi" c. I, s. 267.

[25] „Tarıh-i Peçevı", p. I, s. 274 سنه منه جون شاه كمراه قلعهٔ وانى انتز اعندن اكاه اولدى عسكر اسلام اوزرينه كلمكله عدم قدرتنه وافق، او لمقله قلعة

«...Վանի, Ոստանի, Ամյուկի, Գավաշի, Ալբակի և Խոշաբի տները ավերվեցին»,— գրում է պարսիկ հեղինակ Հասան Ռումլուն[26]։

«Շահ Թահմասպը,— գրում է Շերեֆ էդդինը,— ներխուժեց Բիթլիս, այրեց Մուշը, ինչպես նաև Խույթի շրջակայքը։ Ղզլբաշների զորքերը, շարժվելով Բիթլիսի Գեոկ-մեյդանը, այնտեղ մեծ ավերածություններ կատարեցին»[27]։

Ինչպես 1533—1535 թվականներին, պարսիկների կատարած ավերածությունների անմիջական հետևանքը մահտարաժամը, համաճարակն ու սովն էր։ 1549 թ. Բարկիս գյուղում արտագրված մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք հետևյալը. «...եղև մահտարաժամ և մեռան անթիւ տղայք. հենց որ կալոյ ժամանակին, տղայ, չկայր որ զկամսն քշէր...»[28]։

Պատերազմները մեծ վնաս հասցրեցին գյուղատնտեսությանը և հատկապես անասնապահությանը։ Վախենալով, որ կողոպտված ընտանի կենդանիները կընկնեն թուրքերի ձեռքերը, շահը, Ի. Փեչևիի ասելով, «բացի այդ կենդանիների ոչնչացումից, այլ քաջություն չցուցաբերեց»։

Այսպիսի իրադրության մեջ 1549 թ. ամռանը սուլթան Սուլեյմանը նորից շարժվեց դեպի արևելք ու իշխանության ներքո նորից ենթարկեց ոչ միայն Արևմտյան Հայաստանի քաղաքները, այլև նվաճեց Արևմտյան Վրաստանի մի զգալի մասը։ Այդ օրվանից Վրաստանի նվաճված մասը կազմում էր օսմանյան կայսրության մի նահանգ և հայտնի էր «Վիլայեթ-ի Գյուրջիստան» անունով։

1551—1555 թթ. Հայաստանի տերիտորիայում թուրքերի ու պարսիկների միջև տեղի ունեցան նոր պատերազմներ։ Եթե այս անգամ պարսիկներն ավերեցին Արևմտյան ու Հարավային Հայաստանը, ապա թուրքերը ամենաբարբարոսական ձևով մոխրակույտի են վերածում Արևելյան Հայաստանը։

Օգտագործելով բարենպաստ պայմանները (թուրքերը Հունգարիայում վարում էին անհաջող պատերազմական գործողություններ), պարսիկները, իրենց ձեռքը վերցնելով պատերազմական գործողությունների նախաձեռնությունը, ներխուժեցին Արևմտյան Հայաստան և Քրդիստան, ավերելով և ամայացնելով երկիրը։

«Շահը,— գրում է Փեչևին,— կողոպտեց Ադիլջևազի (Արծկեի), Արճեշի խեղճերին և պաշարեց Արճեշի բերդը»[29]։ Արճեշում պարսիկներին ուժեղ դիմադրություն ցույց տվեց քուրդ էմիր Իբրահիմը։ Քաղաք-ամրոցի պաշարումը տևեց չորս ամիս։ Միայն գաղտնի բանակցություններից հետո, ըստ երևույթին, պարսիկների կողմնակիցների հետ ամրոցը գրավվեց և էմիր Իբրահիմը սպանվեց։ «Եվ շահն հրամայեց, որպեսզի ամրոցն ոչնչացվի և այդպես էլ արեցին»,— գրում է Հասան Ռումլուն[30]։

Խաբեբայության միջոցով գրավվեց և խլաթը։ Պարսիկները բնակիչներին խոստացան ազատություն, սակայն այն բանից հետո, երբ գրավեցին քաղաքը,

عادیجو ازوصحرای موش و اخلاط نواحیسنده اولان رعایا فقرا سنه چایقون صالوب
اله کیرن ضعفا و فقرا و ایتام و... قتل عام ایدرو اله کتوردیکی هر کله واغنام
وکاو وکوساله‌یه کله بان و چوبان اولوب سوریه کیدر.

[26] „Ahsanu't-tawarikli", p. 162.
[27] „Chéréf-nameh", tome II, 1ere partie, p. 582.
[28] Պետական Մատենադարանի ձեռագիր, № 9222, հիշատակարան ժ։
[29] „Tarih-i Peçevi", c. I, s. 296.
[30] „Ahsanu't-tawarikli" p. 166.

թուրքական աղբյուրների վկայությամբ, դաժան կերպով հաշվեհարդար տեսան խաղաղ բնակչության հետ կատարելով մասսայական սպանություններ։ «Շահը,— գրում է Ի. Փեչևին,— գրեց մի շարք սիրալիր նամակներ, որտեղ հայտարարեց. «Ձեր փադիշահը հեռու է, դուրս եկեք այս թակարդից և գնացեք, հակառակ դեպքում ինչքան կարող եք դիմադրել...»։ Շահը բոլորին անխնա կերպով իրենց կանանցով և երեխաներով սրի անցկացրեց և ամբոցը գետնին հավասարեցրեց»[31]։

1551—1553 թթ. պատերազմական գործողությունների ոլորտի մեջ ներգրավեցին նաև Էրզրումի և Կարսի նահանգները։ Այստեղ Շահ Թահմասպի որդի Իսմայիլ Միրզան մի քանի հազար զորքով «կրկնեց նույն բռնությունները և չարագործությունները, որոնք կատարել էին ղզլբաշները Մուշում և Ախլաթում»[32]։

Պարսիկները այնպիսի անտանելի վիճակ են ստեղծում երկրում, որ մարդիկ ստիպված են փախչել հայրենի երկրից։ Այդ մասին ոմն եպիսկոպոս Եղիա անունով հաղորդում է մեզ ուշագրավ տեղեկություններ իր հիշատակարանում։

«Վասն մեղաց մերոց փախուցեալ ընդ միաբանաւ ի յետ բազմացն. ի յանիրաւ և յանաստուած ազգեն ղզլպաշէն և յանողորմ սրոյ նորին..., զոր ի՝ բազմացն զսկաւն ասացից, զի ի ՌԱ (1552) թվին եկն բարկութեամբ շահ Դահմանն զօրօքն իւրովք ի վրա երկրին այնմիք և պաշարեաց զծովն բոլոր զՎասպուրականն և զՀնշտունիքն, զԲաղէշ և զՏարօնն, զԽլաթ և զԳրգնունիքն, զՔաջբերունին և զՏարբերունին, զխնուս մինչ ի յԱրզրում, զԱղբակ և զՄահմուտանք, ամէն առհասարակ պաշարեաց խստութեամբ...։ Զբնակութիւն տեղոյն այնոցիկ բանդեցին, աւերեցին, և հրմնայատակ արարին, որ ոչ մնաց քար ի վրա քարի, և բան մարգարէին անդ կատարեցաւ. թէ քակե և զրնակիչսն ամենայն. զոմանս անողորմ սրոյ ճարակ արեցին, զոմանս ի ձեռացն, ի քթացն և յականջացն խոռոնոքեցին, վասն պահստական ընչից. և զամենայն այն ցիր և ցան արարին... եւ մնացեալքն մազապուրծ եղեալ ի գիշերի և ոչ ի ցերեկի, ահիւ և դողութեամբ, կսկծագին սրտիւ և դառն արտասուօք և յոգոց հանելով, բաժանեցան ի միմեանց, հայր յորդոյ, և մայր ի դստերաց, եղբայր եղբօրէ, և ազգական և սիրելի միմեանց. աղիողորմ հառաչմամբ. և մնացեալ փախրստական. ոմն ի Հորմոց տունն, ոմն ի Թուրքատունն, և ոմն ի Գուրջստունն... և մնաց երկիրն այն յանապատեալ և անբնակ ի մարդկանէ տարին մի բոլոր... Եւ այս ամենայն եկն ի վերայ վասն մեղաց մերոց»[33]։

Թե ինչպիսի ծանր հարված էր հասցված Հայաստանի տնտեսությանը նվաճողների բարբարոսական վերաբերմունքի հետևանքով, նկարագրում է մեզ իր հիշատակարանում Թադեոս Սեբաստացին, որ մեջ ենք բերում փոքր կրճատումով։

«Ի լրանալ հազարամեան թուականիս մերոյ (1551) շարժեցաւ ի վերայ աշխարհիս Հայոց ազգ զզլպաշից՝ մանրել և մաշել զմնացորդս Արամեանց։ Աղետք գործոց վնասու նոցա առաւել են քան զԱնկթամուրայն, զորս կարծեմ թէ չեք տեսեալ ուրուք ի հողածնացս։ Շրջի հանապազ զամն ողջոյն յաւէր քաղաքաց և ի կողոպուտ ընչից. զոր ինչ տեսանեն աչօք, առժամայն ի բաց պահանջեն. և անուամբ հարկաց ի յետին սնանկութիւն ածեն զազգ մեր։ Եւ

[31] „Tarih-i Peçevi", c. I, s. 296.

[32] Նույն տեղում, s. 298.

[33] Պետ. Մատենադարանի ձեռագիր, № 6282, էջ 625ա—625բ։

լսին զ բերանոյ տուրուք զանունն Քրիստոսի, խոշտանգեն տուայտանօք. և թէ ոչ դադարեսցէ այնպիսի խոստովանել զՔրիստոս Աստուած ճշմարիտ. զամենայն ինչս նորա առնուն և զնա սպանանէին։ Զի թագաւոր իւրեանց՝ զոր Շահն կոչին, առաւել քան զԱստուած պաշտէին. այլ սա մեզ փարաւոն եղեւ, և առաւել քան զՍենեքերիմ և զնարուգոդոնոսոր. ոչ գիւղ եթող և ոչ քաղաք, զոր ոչ աղատեաց. էր զի հրով տոչորէր և էր զի բանդեալ ի հիմն հասուցանէր զշինուածս ամրոցաց և աւանից, ևս առաւել զեկեղեցիս և զվանորայս. սպան և զբազումս յերիցանց և ի կրօնաւորաց։ Սփոեցան զօրք նորա յերկիրն Վասպուրականի և Տուրուբերանայ. և չթողին շինութիւն ի կողմանցն Վանայ մինչև յԵղնկայ. սուր և տապար ի ձեռին այսր անդր ընթացս առեալ՝ հատին զայգեստանեայս՝ Խլաթայ և Արծկեայ և կոտորեցին զծառատունկս անտառաց և զփայտս պտղարերս. և հրձիգ արարին զարտօրայս Կարնոյ։ Ողրամ զերկիրն Բասենոյ, զոր հուրբ դատեցին. և ի բարձր Հայոց մինչև ի Սիս Կիլիկիոյ հալածեալ զքրիստոնեայս՝ մարդաթափ արարին զերկիրն ի բնակչաց. ոչ Հայ մնաց և ոչ Տաճիկ, զամենեսեան ի սուր մաշեցին։ Յաւարի առին զսպասս եկեղեաց, ընդ որս և զաստուածաշունչ մատեանս զգիրս վարդապետաց»[34]։

Այդ պատերազմական գործողությունների անմիջական հետևանքների մասին հայ ժողովրդի համար ամենից լավ պատմվում է Խիզանում արտագրված մի ավետարանի հիշատակարանում։

«Ի յայսմ ամի (1555) գրեցաւ սուրբ գիրքս՝ ի դառն և ի չար ժամանակիս, զի յամէն գիմաց դառնութիւն և վիշտն պատէր զՀայոց տառապեալ ազգս. զի յամէն տարի ուրիշ ուրիշ պատուհաս կուգայ ի վերայ Հայոց ազգիս՝ սով, սուր, գերութիւն, մահ. շարժ և տապալումն, ժանկ, մարախ, թրթուր, ջորեաք, գալուկ, հեղեղ անթիւ և անհաշիվ որ ոչ կարեմ ընդ գրով արկանել»[35]։

1554 թ. զարնանը սուլթանական բանակը Դիարբեքիրի վրայով շարժվեց դեպի Էրզրում և Կարս։ Շարժվելով Արևելյան Հայաստան՝ դեպի Շորագյալ, Փեչևիի ասելով, «հայոթական բանակը մինչև հիմքը կործանեց ու ավերեց բարեշեն գյուղերը»։ Շորագյալից սուլթանական բանակը շարժվեց դեպի Երևան (Ռևան)։ Այստեղ թուրքերն այրեցին «շահերի և խանների պալատները, այգիներն ու ամեն ինչ... գետնի հավասարեցրին»։

Թուրքական բանակը ամենուրեք զբաղվում էր կողոպուտով, և այն «հարստությունները, որոնք հնարավոր չէին տանել, բոլորն այրեցին,— գրում է Փեչևին։ Երևանից թուրքական բանակը շարժվեց դեպի Նախիջևան։ Այստեղ նույնպես թուրքերը ոչինչ չթողեցին «քարը քարի վրա», այնպես, որ «հայոթական բանակի» մուտքից առաջ «քաղաքներն ու գյուղերը, տներն ու կառույցները այն աստիճան ավերվել էին, որ բոցի ու ագռավի բույն էին դարձել»[36]։

Ինչպես էին վերաբերվում օկուպանտ թուրքերը տեղական ժողովրդին. նկարագրում է մեզ պատմագիր Փեչևին, նշելով որ հափշտակված հարուստ ավարի մեջ էին և «արծաթի նման մարմին ունեցող մանկամարդ սիրելիներ, վարդանման երես ունեցող մատղաշ ու քնքույշ աղջիկներ, անմման և հրաշալի հարսներ», որոնց թիվը Փեչևիի գրիչը չի կարող նկարագրել։ «Ոչ մի արշավանքի ժամանակ,— շարունակում է հեղինակը,— բանակն այնքան հարստություն ձեռք չբերեց, ինչքան այստեղ», և որ «չկար մի վրան, ուր սիրեկանների

[34] Մ. Չամչյան, Հայոց պատմութիւն, հատ. Գ, էջ 514—515։
[35] Գետ. Մատենադարանի ձեռագիր, № 4515, էջ 278։
[36] „Tarih-i Peçevi", c. I, s. 313.

ու սիրուհիների թիվը երեքից պակաս լիներ։ Հինգից-տասից ավել ունեցողներին հաշիվ չկար»[37]։

Շուտով սուլթանական բանակն ստիպված եղավ նահանջել, ավերված երկրում սովի ճիրանների վտանգի մեջ ընկնելու վախից։

Այս անգամ թուրքերն ստիպված եղան ընդունել հաշտության բանակցությունների առաջարկը պարսիկների կողմից, և 1555 թ. մայիսի 29-ին Ամասիայում արևելյան երկու պետությունների միջև կնքվեց հաշտության պայմանագիր։

Ըստ հաշտության պայմանագրի, օսմանյան կայսրությանն անցավ Հարավային Հայաստանը (Վան, Մուշ, Բիթլիս և այլն), Արևելյան Հայաստանը, Արևելյան Վրաստանը ու ամբողջ Ադրբեջանը մնաց պարսիկների ձեռքում։ Պայմանագրով նախատեսված էր, որ երկու տերությունների սահմանների արանքում գտնվող Կարս քաղաքը դարձնել ամայի ու անմարդաբնակ։

Շարադրված նյութից միանգամայն պարզ է, որ թուրք-պարսկական պատերազմները Հայաստանում ունեցան ամենածանր հետևանքներ երկրի տնտեսության համար և անլուր դժբախտություններ պատճառեցին հայ ժողովրդին։ Երկիրն ավերվում ու ամայանում էր։ Այս կապակցությամբ տեղին է հիշել արևելյան երկրների մասին Ֆրիդրիխ Էնգելսի արած դիտողությունը. «Ավերիչ մի պատերազմ ընդմանակ էր մի քանի դարով անմարդաբնակ անել երկիրը և բնաջնջել նրա ամբողջ քաղաքակրթությունը»[38]։

XVI դարի առաջին կեսին քաղաքական դեպքերի զարգացումը Հայաստանում կախված էր ոչ թե հայ ժողովրդի կամքից, այլ արևելյան երկու պետությունների վարած հավասարաչափ էքսպանսիոնիստական քաղաքականությունից։ Այդպիսի պայմաններում ի՞նչ վերաբերմունք էր ցույց տալիս հայ ժողովուրդը այդ քաղաքական իրադրությանը։ Արդյո՞ք կարող էր նա պասսիվ լինել իր երկրի ճակատագրին, արդյո՞ք չեն եղել զինված ընդհարումներ օտար նվաճողների դեմ։ Աղբյուրները լռում են այդ մասին։ Սակայն ժամանակի կաթողիկոս Ստեփանոս Սալմաստեցու ուղևորությունը Հռոմ և կաթոլիկ Եվրոպայից օգնության հայցումը ինքնըստինքյան ապացույց է այն բանի, որ այդ քայլը հայոց կաթողիկոսն ստիպված էր ձեռնարկել ժողովրդական մասսաների ճնշման ներքո։

---

[37] Նույն տեղում։

[38] К. Маркс и Ф. Энгельс. Сочинения. т. IX, стр. 348.